Հավելված 1

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ներդրումային ծառայությունների մատուցման

**ք. Երևան** **«** _____ **»** _____ **20--- թ.**

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, այսուհետ՝ Բանկ, ի դեմս ----------ի, ով գործում է..... հիման վրա, մի կողմից և ----------,

այսուհետ՝ Ներդրող, մյուս կողմից, այսուհետ առանձին Կողմ, միասին Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

## 1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով Բանկը Ներդրողին մատուցում է ներդրումային ծառայություններ, որը ներառում է առաջնային և/կամ երկրորդային շուկաներում (կարգավորված, /«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կամ չկարգավորված) Բանկի կամ Ներդրողի անունից, սակայն Ներդրողի հաշվին արժեթղթերի ձեռք բերումը, օտարումը և արժեթղթերով այլ գործարքներ կատարելու ներդրողի հանձնարարականների և հայտերի ընդունումը և կատարումը (այսուհետ՝ Ներդրումային ծառայություններ), իսկ Ներդրողը պարտավորվում է վճարել Բանկին վարձատրություն Բանկի Սակագներով սահմանված չափով և կարգով:

1.2 Ներդրումային ծառայությունները մատուցվում են Բանկում Ներդրողի կողմից բացված բանկային/քարտային և արժեթղթերի դեպո հաշիվների առկայության դեպքում:

## 2 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Ներդրումային ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ-իրավական ակտերի և ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման» կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

2.2 Ներդրողի կողմից տրված արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և կատարումը իրականացվում է հանձնարարականներում նշված կատարման օրը: Եթե հանձնարարականների տրման և կատարման օրերը համընկնում են և հանձնարարականները ստացվել է գործառնական օրվա ընթացքում ժամը $15^{30}$-ից հետո, ապա վերջիններս ենթակա են կատարման մեկ բանկային օրվա ընթացքում

2.3 Բանկին արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականները, ինչպես նաև առք ու վաճառքի հայտերը, ուղարկվում են թղթային (ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) Ներդրողի կամ նրա լիազորված անձի կողմից) կամ էլեկտրոնային եղանակով (CBANet համակարգով՝ առկայության դեպքում):

## 3 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 **Ներդրողը պարտավորվում է՝**

3.1.1 Առաջնային տեղաբաշխման կամ հետգնման աճուրդներին մասնակցելու մտադրության դեպքում, աճուրդի անցկացման օրը աճուրդի անցկացման հայտարարված ժամից առնվազն 30 րոպե առաջ Բանկին ներկայացնել հայտ սույն Պայմանագրի Հավելված 1-1-ի համաձայն:

3.1.2 Ապահովել դրամական միջոցների առկայությունը հայտում նշված ծավալը ապահովելու համար տեղաբաշխման աճուրդի անցկացման օրը աճուրդի անցկացման հայտարարված ժամից առնվազն 30 րոպե առաջ Բանկում առկա Ներդրողի №--------- բանկային/քարտային հաշվին:

3.1.3 Ապահովել համապատասխան քանակությամբ արժեթղթերի առկայությունը հայտում նշված ծավալը ապահովելու համար հետգնման աճուրդի անցկացման օրը աճուրդի անցկացման հայտարարված ժամից առնվազն 30 րոպե առաջ Բանկում առկա Ներդրողի №---------- արժեթղթերի դեպո հաշվին:

3.1.4 Ներդրողը պարտավորվում է վճարել Բանկին վարձատրություն Բանկի Սակագներով սահմանված չափով և կարգով:

3.1.5 Երկրորդային շուկայում գործարքների իրականացման նպատակով Բանկին ներկայացնել հայտ (Հավելված 1-2) կամ առք ու վաճառքի հանձնարարական՝ նախապես ապահովելով համապատասխան գումարի կամ համապատասխան քանակությամբ արժեթղթերի առկայությունը իր բանկային/քարտային կամ դեպո հաշվին:

3.1.5.1 Երկրորդային կարգավորված շուկայում /«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ/ հայտի ընդունման վերջնաժամկետ է համարվում գործարքի կատարման օրը ժամը 14:20-ը:

**3.2 Ներդրողը իրավասու է՝**

3.2.1 Բանկին ներկայացնել արժեթղթերով գործարքների իրականացման հանձնարարականներ, ձեռքբերման կամ վաճառքի հայտեր:

3.2.2 Միակողմանիորեն լուծել պայմանագիրը առնվազն 10 օր առաջ Բանկին տեղեկացնելու պայմանով:

3.3 **Բանկը պարտավորվում է՝**

3.3.1 Ներդրողին անհապաղ տեղյակ պահել այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում իր հանձնարարականի ճշգրիտ կատարումը:

3.3.2 Ներդրողին տրամադրել սույն պայմանագրի 3.1.1 և 3.1.5 կետերին համապատասխան ներկայացված հայտերի բավարարումը, մասնակի բավարարումը կամ մերժումը համաձայն (Հավելված 1-3)-ի և 2.3 կետում նշված եղանակով:

3.3.3 Արժեթղթերի ձեռք բերման կամ վաճառքի հայտերի մասնակի բավարարման կամ մերժման դեպքում Ներդրողին վերադարձնել դրամային միջոցները կամ արժեթղթերը վերջինիս բանկային/քարտային կամ դեպո հաշվին 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում:

3.3.4 Կատարել դրամական միջոցների կամ արժեթղթերի մուտքագրումը Ներդրողի հանձնարարությամբ վաճառված կամ ձեռք բերված արժեթղթերից, Ներդրողի բանկային/քարտային կամ դեպո հաշվին, հանձնարարականը կատարելուց 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում:

3.3.5 Ներդրողին տրամադրել Ներդրողի հայտերի հիման վրա Բանկի կողմից իրականացված գործարքների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը:

3.3.6 Ներդրողին տրամադրել կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն Ներդրողի պատվերը կատարելուց հետո անահապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կատարման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը սույն պայմանագրի 7.1. կետում նշված եղանակով:

3.4 **Բանկը իրավասու է՝**

3.4.1 Մերժել Ներդրողի կողմից ներկայացված հայտը, եթե այն ներկայացվել է սույն պայմանագրի և օրենսդրության պահանջների խախտմամբ:

3.4.2 Ներդրումային ծառայությունների մատուցման դիմաց ստանալ Ներդրողից վարձատրություն Բանկի Սակագներով սահմանված չափով՝ գործարքի կատարման պահին դրանք անակնկալ կարգով գանձելով Ներդրողի բանկային/քարտային հաշվի միջոցներից, իսկ միջոցների բացակայության դեպքում պահանջել դրանք Ներդրողից դատական կարգով:

3.4.3 Միակողմանի փոփոխել Սակագներով սահմանված Ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափը և կարգը:

## 4 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Պայմանագրով ամրագրված պարտավորությունների չկատարման /թերի կատարման/ համար Կողմերը պատասխանատվություն են կրում համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն Պայմանագրի:

4.2 Արժեթղթերի ձեռք բերման հայտի մերժման կամ մասնակի բավարարման դեպքում դրամական միջոցների չվերադարձման կամ ժամկետի խախտմամբ վերադարձման դեպքերում, Բանկը Ներդրողին վճարում է տույժ Բանկի պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման գումարից, յուրաքանչյուր օրվա համար ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքի չափով չկատարված կամ թերի կատարված պարտավորությունների գումարից:

4.3 Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմանագրով ամրագրված պարտավորությունների կատարման համար, եթե նրանց չկատարումը հետևանք էր անհաղթահարելի հանգամանքների՝ բնական աղեներները /երկրաշարժ, հրդեհ, ջրհեղեղ և այլն/, պետական մարմինների սահմանափակող կամ արգելող ակտերը:
Վերը նշված հանգամանքների առաջացման դեպքում Կողմերը պարտավոր են տեղեկացնել միմյանց թղթային եղանակով /էլեկտրոնային համակարգով/ անհաղթահարելի հանգամանքների առաջացման պահից 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում:

4.4 Եթե Կողմը, որը ընդունակ չէ իրականացնել սույն Պայմանագրից բխող իր պարտավորությունները անհաղթահարելի հանգամանքների հետևանքով /սույն Պայմանագրի կետ 4.3/, նշված կարգով չի տեղեկացնում երկրորդ Կողմին, առաջացած անհաղթահարելի հանգամանքների պատճառով պարտավորությունների չկատարման վերաբերյալ, իրավասու չէ հիմնվել սույն Պայմանագրով նախատեսվող պարտավորությունների չկատարման պատասխանատվության բացակայության վրա:

4.5 Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց հետ կնքված գործարքներով վերջիններիս պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Ներդրողին պատճառված վնասների համար:

4.6 Ներդրողի հանձնարարականներով երրորդ անձանց հետ կնքված գործարքների արդյունքում երրորդ անձանց կողմից Բանկին ներկայացված պահանջների հետևանքով Բանկի կրած ծախսերի և վնասների հատուցման պատասխանատվությունն ամբողջությամբ կրում է Ներդրողը, բացառությամբ եթե երրորդ անձանց պահանջների հիմք են հանդիսացել Ներդրողի հանձանարականներին ոչ համապատասխան Բանկի կողմից Ներդրումային ծառայությունների մատուցումը:

## 5 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1 Սույն Պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2 Բանակցությունների միջոցով վեճերի և տարաձայնությունների չլուծվելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

## 6 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մեկ տարի: Եթե որևէ Կողմը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց 10 օր առաջ գրավոր չի տեղեկացնում մյուս կողմին Պայմանագրի լուծման մտադրության մասին, ապա Պայմանագրի ժամկետը երկարացվում է մեկ տարով շարունակաբար:

6.2 Պայմանագիրը կարող է լուծվել միակողմանի առնվազն 10 օր առաջ մյուս կողմին տեղեկացնելով:

6.3 Եթե Պայմանագրի լուծման օրվա դրությամբ որևէ կողմ ունի մյուս կողմի նկատմամբ չկատարված պարտավորություններ, ապա պարտավոր է կատարել դրանք ամբողջությամբ լուծման օրվա կամ դրանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, ինչը չկատարելու դեպքում պայմանագիրը համարվում է գործողության մեջ մինչև այդ կողմի պարտավորությունների ամբողջությամբ կատարումը:

6.4 Ներդրողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման օրը Բանկին ներկայացնել արժեթղթերը այլ պահառուի մոտ հաշվառման փոխանցելու հանձնարարական:

6.5 Բանկը պարտավոր է պայմանագիրը լուծելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Ներդրողի հանձնարարականով արժեթղթերը և դրամական միջոցները փոխանցել Ներդրողին:

6.6 Ներդրողի կողմից սույն պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում հանձնարարական չստանալու դեպքում արժեթղթերը և դրամական միջոցները տնօրինվում են օրենքով սահմանված կարգով:

6.7 Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

## 7 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Ներդրողը համաձայն է, որ Բանկը հաշվետվությունները և օրենքով սահմանված այլ պարտադիր տեղեկատվությունը տրամադրի իրեն հետևյալ եղանակով՝

- ☐ Բանկի տարածքում_____
- ☐ Փոստով_____
- ☐ Էլեկտրոնային փոստով_____
- ☐ Այլ կապի միջոցով_____

7.2 Կողմերը պարտավորվում են պահպանել վճարային փաստաթղթերը թղթային և էլեկտրոնային տեսքով՝ 5 /հինգ/ տարի:

7.3 Սույն պայմանագրի կնքմամբ Ներդրողը հաստատում է, որ ծանոթացել է Ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին, Բանկում գործող ներքին իրավական ակտերին և Սակագներին:

7.4 Կողմերը անվերապահորեն համաձայնվում են, որ բացառությամբ սույն պայմանագրի 2.3. կետով սահմանված եղանակով հանձնարարականների և 7.1 կետով սահմանված պարտադիր տեղեկատվության տրամադրման, միմյանց ուղարկվող ցանկացած այլ տեղեկացում, պահանջ, հաղորդում կամ այլ ծանուցում (այսուհետ՝ Ծանուցում) պետք է կատարվի Կողմին առձեռն հանձելով կամ ուղարկվի ստորև նշված Կողմի Ծանուցման եղանակներից որևէ մեկով.

| Ծանուցման եղանակները | Բանկ | Ներդրող |
|---|---|---|
| Փոստով (պարտադիր է նշել հասցեն) | | |
| Էլեկտրոնային փոստով (պարտադիր է նշել հասցեն) | | |
| SMS հաղորդագրությունով (պարտադիր է նշել հեռախոսահամարը) | | |

7.5 Կողմերը անվերապահորեն համաձայնվում են, որ Պայմանագրի 2.3. կետով սահմանված եղանակով հանձնարարականների տրամադրումը և 7.4 կետում նշված Կողմի Ծանուցման եղանակներից որևէ մեկով կատարված Ծանուցումը հանդիսանում է տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց, իսկ Ծանուցումը համարվում է տվյալ Կողմին պատշաճ հանձնված՝ Ծանուցումը փոստով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվան հաջորդող 7-րդ օրվանից, իսկ մյուս եղանակների դեպքում՝ ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից: Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է մյուս կողմին գրավոր տեղեկացնել Պայմանագրի 7.4. կետում նշված իր Ծանուցման որևէ եղանակի փոփոխության մասին այն տեղի ունենալուց երեք բանկային օրվա ընթացքում, մինչև տեղեկացումը Կողմի ծանուցման եղանակով կատարված ծանուցումը համարվում է նրան պատշաճ հանձնված, իսկ տեղեկացումից հետո փոփոխված եղանակով կատարված ծանուցումն է համարվում նրան պատշաճ հանձնված:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասար իրավական ուժ ունեցող օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

## 8 ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԲԱՆԿ<br>«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ | ՆԵՐԴՐՈՂ<br>«_____ »<br>անուն,ազգանուն/անվանում |
|---|---|
| Հասցե՝ 0002, ք. Երևան, փ. Ամիրյան 23/1<br>Հայաստանի Հանրապետություն<br>Պետական գրանցումը՝ 26 օգոստոսի 91թ.,<br>Գրանցման համարը՝ 0156,<br>Լիցենզիա՝Բանկայիյն գործունեության լիցենզիա թիվ 1,<br>Հեռ՝ (374-10) 51-09-09,<br>ֆաքս (374-10) 53-89-04,<br>Էլ հասցե՝ dealing@aeb.am<br>CBANet՝<br>DealingCenterArmEconomBank/ArmEconom/CBANet, | Հասցե՝<br>Հայաստանի Հանրապետություն<br>Պետական գրանցումը/Անձնագիր<br><br>Հեռ՝<br>Էլ. հասցե՝<br>CBANet՝ |
| Վարչության նախագահ | Գործադիր տնօրեն/Քաղաքացի |
| _____ | _____ |

Կ.Տ.

Հավելված 1-1

N _____.
(Ներդրողի ծածկագիրը)

*«---»----------20---թ. ժամ --:--:--*

# ՀԱՅՏ N
## Արժեթղթերի ձեռք բերման/վաճառքի

._____,
(Ներդրողի անվանումը)

պատրաստակամություն է հայտնում առաջնային տեղաբաշխման/ հետգնման աճուրդի ժամանակ իր անունից իր հաշվին գնել /վաճառել Արժեթղթեր, հետևյալ պայմաններով.

### ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

| N | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) | Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով | Միավոր արժեթղթի գինը* | Արժեթղթի քանակը** | Արժեթղթերի ընդհանուր գումարը | Գործարքի արժույթի ISO կոդը | Արժեթղթերի մինչև մարում եկամտաբերություն*** (%) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | |
| 2. | | | | | | | |
| 3. | | | | | | | |
| 4. | | | | | | | |
| 5. | | | | | | | |

### ՈՉ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

| | |
|---|---|
| | միջին կշռված |

**Ներդրող**

._____.
(անուն,ազգանուն/անվանում)

._____.
(հասցե)

._____.

դրամային/քարտային հաշիվ
դեպո արժեթղթերի հաշիվ

._____.
(ստորագրություն)

**Կ. Տ.**

*Պետական պարտատոմսերով գործարքի դեպքում չի լրացվում
**Պետական պարտատոմսերով գործարքի դեպքում չի լրացվում
***Բաժնետոմսերով գործարքի դեպքում չի լրացվում

Հավելված 1-2

N _____.
(Ներդրողի ծածկագիրը)

*«---»----------20---թ. ժամ --:--:--*

# ՀԱՅՏ N

Արժեթղթերի գնման (վաճառքի)

_____,
(Ներդրողի անվանումը)

պատրաստակամություն է հայտնում արժեթղթերի երկրորդային շուկայում (կարգավորված, չկարգավորված) գնել (վաճառել) Արժեթղթեր, հետևյալ պայմաններով.

| N | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) | Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով | Միավոր արժեթղթի գինը* | Արժեթղթի քանակը** | Արժեթղթերի ընդհանուր գումարը | Գործարքի արժույթի ISO կոդը | Արժեթղթերի մինչև մարում եկամտաբերություն*** (%) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | |
| 2. | | | | | | | |
| 3. | | | | | | | |
| 4. | | | | | | | |
| 5. | | | | | | | |

Հայտն ուժի մեջ է մինչև 20- թ._____«____»-ը ժամը --:--

**Ներդրող**

._____.
(անուն,ազգանուն/անվանում)

._____.
(հասցե)

._____.

դրամային/քարտային հաշիվ
արժեթղթերի դեպո հաշիվ

._____.
(ստորագրություն)

**Կ. Տ.**

*Պետական պարտատոմսերով գործարքի դեպքում չի լրացվում
**Պետական պարտատոմսերով գործարքի դեպքում չի լրացվում
***Բաժնետոմսերով գործարքի դեպքում չի լրացվում

Վարչության նախագահ---------- Հաճախորդ

Հավելված 1-3

## ՀԱՅՏԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ ( ՄԱՄՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ) ԿԱՄ ՄԵՐԺՈՒՄ

___ _____

*Ներկայացվում է « ----------» համաձայն «__» _____20__թ. կնքված N___ պայմանագրի:*

Սույնով *«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ* հայտնում է, որ Ձեր կողմից --,--,20—թ. ժամը --:-- ին ներկայացված N -- հայտը բավարարվել է ---------- հետևյալ ծավալներով և պայմաններով:

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

| N | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) | Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով | Միավոր արժեթղթի գինը* | Արժեթղթի քանակը** | Արժեթղթերի ընդհանուր գումարը | Գործարքի արժույթի ISO կոդը | Արժեթղթերի մինչև մարում եկամտաբերություն*** (%) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | |
| 2. | | | | | | | |
| 3. | | | | | | | |
| 4. | | | | | | | |
| 5. | | | | | | | |

ՈՉ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

| | |
|---|---|
| | միջին կշռված |

| | |
|---|---|
| *Սակագնի կիրառվող դրույքաչափ (տոկոս)* | |
| *Սակագին (դրամ)* | |

_____ _____

Վարչության նախագահ՝

---

---

*Կ. Տ.*

**--/--/20—թ.**

*Պետական պարտատոմսերով գործարքի դեպքում չի լրացվում
**Պետական պարտատոմսերով գործարքի դեպքում չի լրացվում
***Բաժնետոմսերով գործարքի դեպքում չի լրացվում